Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ

Edu Armenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինչպե՞ս ներգրավել և դասապրոցեսի ակտիվ մասնակից դարձնել բոլոր սաներին

Հետազոտող ուսուցիչ՝ Արաքսյա Գևորգյան

Բովանդակություն

Ներածություն…….. 3

Գլուխ 1. Խնդրի նկարագրությունը…….…… . 5

Գլուխ 2.Արդյունավետ դասի կազմակերպումը…….…… 10

Գլուխ 3. ՏՀՏ-ի և առցանց կրթական գործիքների

կիրառությունը դասապրոցեսին…… 14

Գլուխ 4.Գրաֆիկական կազմակերպիչների կիրառությունը

ուսումնական գործընթացում…… …….. 16

Եզրակացություն…….. 19

Օգտագործված գրականության ցանկ…….. 20

Ներածություն

Ես Արաքսյա Գևորգյանն եմ, շուրջ 26 տարի դասավանդում եմ «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաները Գավառ քաղաքի N7 (այժմ՝ հերոս Գեորգի Մնացականյանի անվան) միջնակարգ դպրոցում: Իմ նշանաբանն է եղել՝ երբեք չբավարարվել ունեցած գիտելիքներով և հմտություններով, միշտ ձգտել սովորել նորը:

Տարիների փորձից եկել եմ այն եզրահանգման, որ յուրաքանչյուր ուսուցիչ, որի նպատակն է վարել արդյունավետ դաս և ունենալ շոշափելի արդյունքներ, դասարան մտնելուց առաջ պետք է պլանավորի իր անելիքները, դասի տարբեր փուլերի քայլերը, հստակեցնի վերջնարդյունքներին հասնելու ճանապարհը: Խիստ կարևոր է հաշվի առնել բոլոր սաների կարողություններն ու հետաքրքրությունները, ինչպես նաև պատրաստ լինել հաղթահարել անակնկալ խոչընդոտները:

Աշխատանքային գործունեության ընթացքում ինչպես շատերի, այնպես էլ իմ առջև ծառացել են բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումները փորձել եմ գտնել՝ արդի մանկավարժության վերաբերյալ հարուստ գրականությունն ուսումնասիրելով, տարբեր մեթոդներ և հնարներ կիրառելով:

Վերջին տարիներին ինձ համար կարևորագույն խնդիր է դարձել դասապրոցեսին անխտիր բոլոր սաներին ներգրավելը և ակտիվ մասնակից դարձնելը:

Որքան էլ կատարում եմ վերը թվարկված նախապատրաստական քայլերը, դասապրոցեսի ընթացքում կիրառում եմ տարբեր մեթոդներ, օգտագործում զանազան դիդակտիկ պարագաներ, այնուամենայնիվ, դասարանում լինում են սաներ (թեկուզ մեկը կամ երկուսը), որոնք չեն ներգրավվում կամ ակտիվորեն չեն մասնակցում դասապրոցեսին (կարող են ներգրավված լինել դասապրոցեսին, բայց ակտիվ մասնակիցներ չլինել), ընդ որում՝ կապ չունի՝ սանը ինչ ընդունակությունների տեր է՝ գերազա՞նց, միջի՞ն, թե՞ բավարար:

Այսպիսով՝ սույն **հետազոտության խնդիրն է՝** ինչպե՞ս ներգրավել և դասապրոցեսի ակտիվ մասնակից դարձնել բոլոր սաներին:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրության արդյունքում գտնել և ներկայացնել խնդրի լուծման մի քանի ժամանակակից արդյունավետ մեթոդներ ու հնարներ, օրինակ՝ ՏՏ-ի և առցանց կրթական գործիքների կիրառությունը դասապրոցեսին, արդյունավետ դասի կազմակերպումը, գրաֆիկական կազմակերպիչների կիրառումը, ճիշտ հրահանգներ տալը և այլն, ցույց տալ դրանց կիրառման առանձնահատկություններն ու արդյունավետությունը:

Հետազոտության կառուցվածքը: Հետազոտությունը կազմված է ներածությունից, 4 գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Գլուխ 1.

Խնդրի նկարագրությունը

Վաղուց անցել են այն ժամանակները, երբ դասասենյակում գտնվող սովորողները դասապրոցեսի ընթացքում մեծ մասամբ լուռ նստում էին և լսում ուսուցչի դասախոսությունները, բացատրություններն ու մեկնաբանությունները, որոնց հետևում էր ավանդական հարցը՝ «հասկացա՞ք», իսկ սաները միահամուռ պատասխանում էին՝ «այո՛»: Այնուհետև հնչում էր դարձյալ ավանդական դարձած մյուս հարցը՝ «հարցեր ունե՞ք», որին ի պատասխան հնչում էր միասնական «ոչ»-ը: Բայց, որպես կանոն, հաջորդ դասին պարզվում էր, որ ոչ բոլորն են հասկացել, և որ բոլորն էլ հարցեր ունեն:

Վերջին տարիներին իրականացված կրթական բարեփոխումների, ուսումնական գործընթացի կազմակերպման մոտեցումներում կատարված դրական փոփոխությունների, զանազան ինտերակտիվ մեթոդների կիրառության արդյունքում սովորողները դարձել կամ դառնում են ուսումնառության պրոցեսի ակտիվ մասնակիցներ, ուսուցիչը սոսկ բացատրող-սովորեցնողից դարձել է ուղղորդող, սովորել սովորեցնող: Բայց անցումային ճանապարհն այնքան էլ դյուրին և անխոչընդոտ չի եղել ու չէ: Միևնույն է, մենք՝ ուսուցիչներս, բախվում ենք տարբեր խնդիրների, որոնցից մեկն էլ անխտիր բոլոր սաների ներգրավվածության ու ակտիվ մասնակցության բացակայությունն է դասապրոցեսին:

Պարզելու համար, թե որքանով է խնդիրը արդիական, այն խնդիր է միայն ի՞նձ համար, թե՞ նաև այլ ուսուցիչների, Google.forms առցանց կրթական գործիքի միջոցով անցկացրել եմ հարցում տարբեր առարկաներ դասավանդող 25 ուսուցիչների շրջանում:

«Կարողանո՞ւմ եք բոլոր սովորողներին ներգրավել և ակտիվ մասնակից դարձնել դասապրոցեսին» հարցին մասնակից ուսուցիչները պատասխանել են այսպես.

Կարողանո՞ւմ եք բոլոր սովորողներին ներգրավել և ակտիվ մասնակից դարձնել դասապրոցեսին:

Копир

25 ответов



Ուշադրության է արժանի այն փաստը, որ հարցվածների միայն 16%-ն է պատասխանել՝ «Այո՛, միշտ»: 40%-ը ընտրել է «Այո՛, բայց մեկին կամ մի քանիսին այնուամենայնիվ չի հաջողվում ներգրավել» պատասխանը, իսկ 44%-ը՝ «Այո՛, հաճախ» պատասխանը, որը նույնպես ենթադրում է, որ ոչ միշտ են կարողանում բոլորին ակտիվ մասնակից դարձնել ուսումնառության գործընթացին: Արդյունքները վկայում են, որ խնդիրն առկա է և անհանգստացնում է բազմաթիվ ուսուցիչների:

Ուշագրավ են նաև մյուս հարցի համար ընտրված պատասխանների արդյունքները.

Ո՞րն է պատճառը, որ դասապրոցեսին ներգրավվում են ոչ բոլոր սովորողները:

Копир

25 ответов



Հարցմանը մասնակցած ուսուցիչների 56%-ը գտնում է, որ պատճառը, հավանաբար, համապատասխան մեթոդներ չկիրառելն է, իսկ 28%-ը կարծում է, որ սովորողներին պարզապես չի հետաքրքրում ուսումնառության գործընթացը, այլ պատասխաններ են տվել հարցման մասնակիցների 16%-ը, որոնց կարծիքը հետևյալն է.

Ակտիվ աշակերտները միշտ առաջ են ընկնում:

Գրեթե միշտ ներգրավվում են բոլոր սովորողները, երբեմն մատուցվող նյութի բարդ լինելը կարող է ոչ բոլորի ներգրավվածության պատճառ դառնալ:

Եթե դասարանում կա չափից դուրս գերակտիվ երեխա , կամ հակառակը գեր պասիվ երեխա:

Ինձ հետաքրքրում էր նաև ուսումնական գործընթացի մյուս մասնակիցների՝ սովորողների՝ վերոնշյալ խնդրի վերաբերյալ ունեցած կարծիքը: Այդ նպատակով հարցում անցկացրի տարբեր դասարաններում սովորող աշակերտների շրջանում: 30 մասնակիցների 60%-ը «կարողանո՞ւմ ես ներգրավվել և ակտիվորեն մասնակցել դասապրոցեսին» հարցին որպես պատասխան ընտրել է «այո՛ հաճախ, բայց ոչ միշտ» տարբերակը:

1.Կարողանո՞ւմ ես ներգրավվել և ակտիվորեն մասնակցել դասապրոցեսին: Копи

30 ответов



Արդյունքները դարձյալ վկայում են, որ խնդիրն առկա է, և հարկավոր է գտնել խելամիտ լուծումներ: Իսկ այդ ճանապարհին ամենից առաջ հարկավոր է բացահայտել սաների կարիքները, պարզել նրանց հետաքրքրությունների շրջանակը: Ուստի

հարցման մասնակիցներից փորձեցի ճշտել՝ իրենց կարծիքով ի՞նչ պետք է անի ուսուցիչը սաների ուշադրությունը պահպանելու և նրանց ուսումնական գործընթացին ներգրավելու նպատակով, ի՞նչը կամ ինչե՞րը կնպաստեն իրենց ակտիվ մասնակցությանը: Ահա թե ինչ են մտածում իրենք՝ սովորողները:

Ի՞նչը/ինչե՞րը կնպաստեն դասապրոցեսին քո ակտիվ մասնակցությանը: /Պատասխանը գրել հայատառ/

24 ответа

Հետաքրքիր մեթոդներ ,խաղեր:

Որպեսզի դասապրոցեսն ավելի հետաքրքիր անցներ, ես կցանկանայի, որ խաղերի տեսքով դասերն ավելի հաճախ լինեին:

ուսուցչուհուս տարբեր մեթոդներ կիրառելը

Ուսուցչի լավ, բարի վերաբերմունքը և դասի հետաքրքրությունը

Դասի ընթացքում խաղեր կազմակերպելը, ՏՏ կիրառումը

Նորագույն տեխնոլոգիաներով դասապրոցեսը

Դիտակտիկ նյութերով կահավորված դասարանները

Դասերի հետաքրքրությունը

Հետաքրքիր, օգտակար թեմաները, ուսուցիչների կողմից կիրառված տարբեր մեթոդները

Նոր մեթոդների կիրառումը

Առցանց գործիքներով խաղերը, ուսուցչի կիրառած հետաքրքիր մեթոդները

Հաճախ կրկնվող պատասխաններից են նոր և տարբեր մեթոդների, ՏՏ-ի կիրառումը, դասի ընթացքում առցանց կրթական գործիքներով խաղ-վարժությունների կատարումը, դիդակտիկ պարագաների առկայությունը, ինչպես նաև ուսուցչի լավ, դրական վերաբերմունքը:

Քանի որ ուսուցիչներից շատերին է անհանգստացնում դասապրոցեսին սաների ոչ լիարժեք մասնակցության խնդիրը, այդ պատճառով հետաքրքիր էլ պարզել՝ ինչպես են նրանք փորձում լուծել այն, ինչ մեթոդներ կամ հնարներ են կիրառում դասի ընթացքում՝ պասիվ աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելու և նրանց դասի մասնակից դարձնելու նպատակով: Ուսուցիչները նշեցին տարբեր ժամանակակից մեթոդներ ու հնարներ, որոնց կիրառությունը կարող է դիտվել որպես հարցի լուծման տարբերակ:

Ներկայացրե՛ք որևէ մեթոդ կամ հնար, որը կիրառելով՝ կարողանում եք դասապրոցեսին ներգրավել և ակտիվ մասնակից դարձնել բոլոր սովորողներին:

14 ответов

Վենի Դիագրա , կռահիր և զույգ կազմիր

Դասապրոցեսը դարձնելով մատչելի բոլորի համար և ունենալով համապատասխան օրվա պլանում ուսուցանող խաղերի անցկացում, ֆիլմերի և տեսանյութերի դիտում՝ դասապրոցեսը կդառնա ավելի հետաքրքիր և ոգևորիչ:

Վեննի դիագրամ

"Մտագրոհ","Ձնագնդի"մեթոդները

Հարցադրումների մեթոդը,որը հնարավորություն է տալիս բոլոր աշակերտներին ներգրավել դասին:

Տարրական դասարաններում դասապրոցեսը գրավիչ դարձնելու համար դասը անցկացնում ենք խաղերի, դիտակտիկ նյութերի միջոցով:

Ձնագնդի մեթոդը
Մտագրոհ
Ձնագնդի, մտագրոհ, խմբային աշխատանք
Մտագրոհ, դերային խաղ, ելքի կամ մուտքի տոմս:
Պրիզմա, Синквейн, Վենի դիագրամ, Մտագրոհ
Պրիզմա, Վենի դիագրամ, Մտագրոհ, Синквейн
Համատեղ խմբային մտագրոհ մեթոդով

Վերը նշված մեթոդները ինքս էլ եմ հաճախ կիրառում, սակայն դրանք դարձյալ չեն տալիս ցանկալի արդյունքը:

Հաջորդ գլուխներում կներկայացնեմ խնդրի լուծման իմ տարբերակները՝ ինչպես, ինչ մեթոդներ կիրառելով՝ կարելի է ապահովել բոլոր աշակերտների մասնակցությունը և ներգրավվածությունը, ինչպես նաև բարձրացնել դասապրոցեսի արդյունավետությունը:

Գլուխ 2.

Արդյունավետ դասի կազմակերպումը

Ստորև ներկայացնում եմ արդյունավետ դասի կազմակերպմանը և ուսումնական գործընթացին սովորողների լիարժեք մասնակցությանը նպաստող մի քանի մեթոդներ և հնարներ, որոնք կիրառել եմ և ստացել ցանկալի արդյունքներ:

Դասի պլանավորում: Ինչպես ասում են, դասն սկսվում է դասարան մտնելուց առաջ: Յուրաքանչյուր ուսուցիչ գիտի, որ դասի արդյունավետությունը կախված է ամենից առաջ դասի ընթացքի ճիշտ պլանավորումից: Եթե դասի քայլերի հաջորդականությունը լինի հստակ մշակված, ապա սովորողները կիմանան իրենց անելիքները և ձանձրանալու ժամանակ չեն ունենա: Հարկավոր է նաև ունենալ

նախապես կազմած լրացուցիչ ուսումնական հանձնարարություններ, որոնք կտրվեն արագ կողմնորոշվող և տաղանդավոր սաներին՝ ողջ դասապրոցեսի ընթացքում նրանց ընդգրկվածությունը ապահովելու նպատակով:

Դասը պլանավորելու և նախատեսված բոլոր նյութերը պատրաստ ունենալու համար կան բազմաթիվ արդյունավետ միջոցներ, որոնցից է Googl.mindmup քարտեզագրման առցանց կրթական գործիքը:

https://drive.mindmup.com/map/1Q_eFLFmghipLMF1fHzvt3bQuMgD0vFd-



Տեսանելի և հստակ հրահանգներ: Կան սովորողներ, որոնք դասին չեն մասնակցում միայն այն պատճառով, որ չեն ընկալում՝ իրենցից ինչ է պահանջվում, ինչ պետք է անեն: Ուստի կարևոր է, որ ուսուցիչը դասի նպատակները, քայլաշարը, հասկանալի ձևակերպված հրահանգները դարձնի տեսանելի, օրինակ՝ ցուցադրի սահիկաշարի միջոցով կամ նախապես գրի գրատախտակին: Այս դեպքում բոլորը ոչ միայն կլսեն, այլև հստակ կտեսնեն առաջադրանքները, հնարավորություն կունենան մի քանի անգամ ընթերցելու և հասկանալու, իսկ ուսուցիչը ժամանակ կունենա շրջելու և բոլորին հսկելու: Արդյունքում կմեծանա դասի նկատմամբ հետաքրքրությունը, ակտիվորեն կմասնակցեն անխտիր բոլոր աշակերտները:





«Արդարության գավաթ» կամ պատահականության սկզբունքով ընտրել պատասխանողին: Աշակերտների ուշադրությունը պահպանելու և նրանց ակտիվացնելու արդյունավետ հնարներից է պատահականության սկզբունքով պատասխանելու հերթականությունը: Այն իրականացնում ենք տարբեր ձևերով. դասասենյակում համապատասխան տեխնիկայի առկայության պարագայում օգտագործում ենք տարբեր առցանց կրթական գործիքներով առաջարկվող «Պտտվող անիվը» (այն մեծ ոգևորություն է առաջացնում նույնիսկ ավագ դպրոցի սովորողների շրջանում), կամ նախապես սովորողների անունները գրում ենք թերթիկներին կամ ցանկացած այլ առարկայի վրա: Նախապես աշակերտներին զգուշացնում ենք՝ քանի որ պատասխանողի անունը ընտրում ենք պատահականորեն, պետք է շատ ուշադիր լինեն, որպեսզի կարողանան շարունակել դասընկերոջ միտքը, պատասխանել հարցերին կամ կատարել առաջադրանքը: Այս ուսումնական հնարի առավելությունները մի քանիսն են. մոտիվացնում է սովորողներին, կենտրոնացնում է նրանց ուշադրությունը, հնարավորություն է ընձեռում արդարության սկզբունքով պատասխանելու հնարավորություն տալ և մասնակից դարձնել բոլորին, իսկ

գերակտիվ երեխաները անդադար «ես, ես» կրկնելու փոխարեն համբերատար սպասում են պատասխանելու իրենց հերթին: [1]

«Մուտքի տոմս», «Ելքի տոմս» [1]: Լավագույն և սաների կողմից սիրված մեթոդներից է դասի սկզբում և ավարտին տրվող «Մուտքի և ելքի տոմսերը»: Դասի սկզբում սովորողներից յուրաքանչյուրին հանձնարարվում է պատասխանել «Մուտքի տոմսում» նշված հարցերին, որոնք կարող են վերաբերել թե՛ նախորդ դասին ուսուցանված, թե՛ նոր ներկայացվելիք թեմային: Հարցերը կարող են լինել տարբեր բնույթի՝ ելնելով թեմայի առանձնահատկությունից: Դասի վերջում յուրաքանչյուր սովորողի տրվում է «Ելքի տոմս» և հանձնարարվում՝ 5 րոպեի ընթացքում պատասխանել հարցերին: Այս մեթոդը հաճախակի կիրառելու արդյունքում սաները դառնում են ավելի ուշադիր և հետևողական, քանի որ գիտեն՝ դասի վերջում պետք է կարողանան ներկայացնել՝ ինչ սովորեցին, ինչն էր հետաքրքիր կամ անհասկանալի և այլն:

Մուտքի տոմս

1.Ո՞րն է կոչվում բանաստեղծական շարք, ո՞ր շարքում է զետեղված «Հայրենիքում» բանաստեղծությունը:

2. Ի՞նչ պատկերներով է Չարենցը ներկայացնում հայրենի երկիրը:

3. Հայրենի բնաշխարհում ո՞վ է արթնանում նրա տեսիլքի մեջ, ի՞նչ զգացողություններ ունի քնարական հերոսը:

4. Պատկերավորման ի՞նչ միջոցներ են գործածված բանաստեղծության մեջ, գրի՛ր օրինակներ:


ԵԼՔԻ ՏՈՄՍ

20-25 բառի սահմաններում գրի՛ր՝ ի՞նչ սովորեցիր այս դասի ընթացքում:

Գուշակի՛ր, թե այս թեմայի ընթացքում մենք էլ ի՞նչ կարող ենք սովորորել և ինչո՞ւ:

Ո՞րն էր այսօրվա դասի ամենալավ մասը ..., ինչո՞ւ:

«Միայնակ, երկուսով, միասին» կամ «Մտածի՛ր, զույգ կազմի՛ր, քննարկիր» [2]: Սա ևս արդյունավետ և բավականին պարզ հնար է, որը հնարավորություն է տալիս աշակերտներին առաջադրանքը նախ կատարել ինքնուրույն, այնուհետև քննարկել կողքին նստած դասընկերոջ հետ, որից հետո քննարկել ամբողջ դասարանի և ուսուցչի հետ:

«Լուսակիր»: [3] Հաճախ ուսուցիչը բավարար ժամանակ չունենալու պատճառով չի կարողանում իր հարցերի պատասխանները ստանալ բոլոր աշակերտներից և սահմանափակվում է մեկ-երկու աշակերտի կարծիքը լսելով: Արդյունքում ուսուցիչը չի կարողանում ամբողջական պատկերացում կազմել՝ ինչ չափով են բոլոր սովորողները յուրացրել այս կամ այն թեման կամ ճիշտ կատարել առաջադրանքը: Այս դեպքում նպատակահարմար է կիրառել «Լուսակիր» գերարդյունավետ մեթոդը (այն ևս սովորողների ամենասիրված մեթոդներից մեկն է): Սովորողներին տրվում են երեք գույնի թերթիկներ, ուսուցիչը դասարանին տալիս է տարբեր բնույթի հարցեր, ձևակերպում ճիշտ կամ սխալ պնդումներ: «Ճիշտ է» պատասխանի դեպքում սովորողները բարձրացնում են կանաչ գույնի թերթիկները, եթե «սխալ է»՝ դեղինը, եթե չգիտեն՝ կարմիրը: Սխալվող դասընկերներին ճիշտ պատասխանը ներկայացնում են կանաչ թերթիկներ բարձրացնող դասընկերները: Մեթոդը հնարավորություն է տալիս ակտիվացնել ամբողջ դասարանին ու ընդգրկել բոլորին, ինչպես նաև ստուգել՝ արդյո՞ք բոլորն են հասկացել թեման կամ առաջադրանքը, տնային աշխատանքը ճիշտ կատարել:

Գլուխ 3.

ՏՀՏ-ի և առցանց կրթական գործիքների կիրառությունը դասապրոցեսին

Մեր օրերում աշակերտակենտրոն ուսումնական գործընթացի կազմակերպումը և ցանկալի արդյունքների հասնելը առանց տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառության գրեթե անհնար է: Ինչպես ցույց տվեցին հարցման

արդյունքները, սովորողներն իրենք էլ կարծում են, որ դասապրոցեսի ակտիվ և լիարժեք մասնակցությանը նպաստող գործոններից մեկն էլ ՏՀՏ-ի և առցանց կրթական գործիքների կիրառությունն է: Բացի այդ, կարծում եմ, այն ավելի դյուրին է դարձնում ուսուցչի աշխատանքը, օգնում է պարզել և շտկել բացթողումները, նպաստում է սովորողների կողմից նյութը առավել խորությամբ ընկալելուն և յուրացնելուն ու կրթության որակի բարձրացմանը: Իսկ որ ամենակարևորն է, օգնում է ձևավորել ժամանակի պահանջներին համապատասխան գիտելիքներ ու հմտություններ ունեցող քաղաքացի: Այդ պատճառով մենք պետք է հաճախակի կիրառենք ՏՏ և առցանց գործիքներ:

Դասի պլանավորման համար օգտագործում եմ Mindmup քարտեզագրման գործիքը (այն ներկայացրել եմ նաև 2-րդ գլխում):
https://drive.mindmup.com/map/1BP7qYw51p2O6dtXsrCXyK8kPvDxZjZ60

Այս գործիքով աշխատելիս ուսուցիչը հնարավորություն է ունենում դասանյութը ներկայացնել սահիկաշարի միջոցով, ներառել հավելյալ տեղեկություններ, տեսանյութեր, նկարներ, տեսահոլովակներ և այլն: Նման դեպքերում բնականաբար մեծանում է սաների հետաքրքրությունը, ապահովվում է բոլոր սովորողների լիարժեք մասնակցությունը, ստեղծվում են հավասար կրթություն ստանալու պայմաններ:

Իմ՝ որպես ուսուցչի անփոխարինելի օգնականներն են դարձել առցանց կրթական գործիքները, որոնցից են՝ LearningApps, Kahoot, Quizizz, Google.forms, Wordwall, Ansvergarden:

Թեստեր և հարցարաններ կազմելիս կիրառում եմ Quizizz, Google.forms գործիքները, որոնցում նախապես նշվում են ճիշտ տարբերակները, իսկ սովորողների կատարած աշխատանքների ճիշտ և սխալ տարբերակները ցուցադրվում են միանգամից: Ուսուցիչն այլևս կարիք չի ունենում ստուգելու յուրաքանչյուրի աշխատանքը առանձին-առանձին:
https://quizizz.com/join?gc=042073
https://quizizz.com/join?gc=703429
https://forms.gle/tj8GJ38MrkeUZNpr6
https://forms.gle/NmPvqjn9S2ncExFP9

Դրանցով կազմված խաղ-վարժությունները, թեստերը սաները կատարում են մեծ հետաքրքրությամբ: Ճիշտ է, միշտ չէ, որ դպրոցում հնարավորություն ենք ունենում դասը կազմակերպել համակարգչային դասասենյակում, բայց այդ խնդրի լուծումը նույնպես գտել ենք. նախապես սովորողների հետ պայմանավորվում ենք դպրոց բերել հեռախոսներ, իսկ ինտերնետ կապ չունենալու դեպքում այն տրամադրում եմ իմ հեռախոսի միջոցով: Առաջադրանքները դասարանում կատարելուց հետո հանձնարարում եմ դրանք կատարել նաև տանը բազմաթիվ անգամներ, որը հնարավորություն է տալիս ավելի լավ ամրապնդել սովորած գիտելիքները:

Դասանյութի ավելի լավ յուրացմանն ու ամրապնդմանն են նպաստում նաև LearningApps-ով կատարվող վարժությունները: Այն ձևավորող գնահատում իրականացնելու ամենաարդյունավետ տարբերակներից մեկն է:

https://learningapps.org/watch?v=pm38a08hc20
https://learningapps.org/watch?v=peqvnjwa320
https://learningapps.org/watch?v=pg2xcgdtc20
https://learningapps.org/view12607005
https://learningapps.org/view12677247

Wordwall գործիքի ընձեռած հնարավորություններն ավելի մեծ են. օգնում է կազմել տարաբնույթ հետաքրքիր և գրավիչ խաղեր, առաջադրանքներ, իսկ պտտվող անիվի օգնությամբ՝ նաև ընտրել դասը պատասխանողներին, առաջադրանքներ կատարողներին:

https://wordwall.net/resource/1904889
https://wordwall.net/play/1946/849/206?fbclid=IwAR0sx0nMpPQRAwlhQqtGiLPsNWCTRf9PPuWqe7jfdPCf1kdarcF4lMfVu1g
https://wordwall.net/resource/1903331
https://wordwall.net/resource/1904071

Միանգամից բոլոր աշակերտներին գրատախտակի մոտ կանչել բնականաբար հնարավոր չէ, ուստի օգտվում ենք Padlet, Google.jamboard առցանց գրատախտակներից. բոլոր սաները հնարավորություն են ստանում աշխատել

միաժամանակ, իսկ ուսուցիչը՝ տեսանելի և հասանելի դարձնել հանձնարարությունը, լրացուցիչ նյութերը, միանգամից տեսնել և հետևել բոլորի աշխատանքներին: https://jamboard.google.com/d/1kFJ8_JbdWaCz8OCXr0h9ir_iKw8be7To_qqDvDqYoZY/edit?usp=sharing

Կարճ և արագ հարցում անցկացնելու համար հարմար է կիրառել Ansvergarden գործիքը:

Կրթական առցանց գործիքները բազմաթիվ են, և բոլորն են նպաստում են դասապրոցեսին սովորողների ակտիվ մասնակցությանն ու ներգրավմանը, ուսումնական գործընթացի արդյունավետ և հետաքրքիր ձևով կազմակերպմանը:

Գլուխ 4.

Գրաֆիկական կազմակերպիչների կիրառությունը ուսումնական գործընթացում

Դասավանդման ընթացքում կատարած հետազոտությունները ցույց տվեցին, որ սովորողների ներգրավվածությանը նպաստող և լիակատար մասնակցությունն ապահովող միջոցներից մեկն էլ դասապրոցեսի ընթացքում գրաֆիկական կազմակերպիչների կիրառությունն է: Գրաֆիկական կազմակերպիչները գործիքներ են՝ գծապատկերների տեսքով, որոնք սաներին օգնում են արագ և արդյունավետ կերպով յուրացնել դասանյութը, ավելի դյուրին կերպով ըմբռնել հիմնական հասկացությունները, դասակարգել գաղափարները: Այս գործիքները տարբեր են՝ ինքնագնահատման, աճի մտածողության, մաթեմատիկայի, ընթերցանության, երկու և ավելի հասկացությունները համեմատելու, նմանություններն ու տարբերությունները տեսանելի կերպով ներկայացնելու գրաֆիկական կազմակերպիչներ, հայեցակարգային քարտեզներ ու գաղափարների ցանցեր, ուստի և կարելի է կիրառել տարբեր առարկաների դասաժամերին [**4**]: Աշակերտները անհատական, զույգերով կամ խմբային աշխատանքներ կատարելիս, ստանալով օրվա թեմային համապատասխան

գրաֆիկական կազմակերպիչը, դրա միջոցով հնարավորություն են ստանում տեսանելի դարձնել հիմնական ասելիքն ու կարևոր կետերը:

Ստորև ներկայացնում եմ «Մայրենի», «Հայոց լեզու» և «Գրականություն» առարկաների դասավանդման ընթացքում իմ կողմից կիրառված գրաֆիկական կազմակերպիչներից մի քանիսը, որոնք նպաստել են վերոնշյալ խնդրի լուծմանը, ինչպես նաև դասի արդյունավետության բարձրացմանը.

Ծաղիկ [5]- պարբերությունը կամ թեմային վերաբերող գլխավոր նախադա- սությունը գրում են ծաղկի մեջտեղում, իսկ լրացուցիչ մանրամասները՝ ծաղկա- թերթիկների մեջ:



Հաջորդականության շղթա [5]-գրական ստեղծագործությունն ուսումնասի- րելուց հետո սովորողները ներկայացնում են դեպքերը, իրադարձություններն ու հետևանքները՝ պահպանելով դրանց հաջորդականությունը:

Շրջան -կարկանդակ՝ 8 մասից - Լեզվական նյութը ամփոփում և ամրապնդում են այս գծապատկերի միջոցով:





Գաղափարների պայթյուն-ստեղծագործության բովանդակությանը ծանոթանա- լուց և կերպարներին բնութագրելուց հետո կատարում են եզրահանգումներ, գրում՝ ինչ սովորեցին, որն էր ասելիքը կամ գաղափարը:





Գրաֆիկական կազմակերպիչները բազմաթիվ են ու բազմատեսակ. ուսուցչից պահանջվում է գտնել իր դասավանդած առարկային համապատասխանը և հարմարեցնել օրվա թեմային:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ ուսուցիչների մեծ մասի համար խնդիր է դասապրոցեսին սովորողների ներգրավվածությունը և ակտիվ մասնակցությունը: Խնդրի առկայությունը ընդունում են նաև իրենք՝ սաները: Հետազոտական աշխատանքի արդյունքում կարելի է կատարել հետևյալ եզրահանգումը. երբ ուսուցիչները նախապես հստակեցնում են իրենց առջև դրված նպատակները և պլանավորում են բոլոր քայլերը, դասի ընթացքում կիրառում են առցանց կրթական գործիքներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տարբեր ակտիվացնող մեթոդներ, սաներին դասը հետաքրքրում է, նրանք ակտիվ ներգրավվում են և դառնում կրթական գործընթացի լիարժեք մասնակիցներ: Նրանք սիրում են շարժվել, դասագրքից ու գրատախտակից օգտվելուն զուգահեռ գործածել տարբեր սմարթֆոններ, օգտվել գիտատեխնիկական առաջընթացի արդյունքում ստեղծված լայն ու բազմազան հնարավորություններից, ոչ միայն սովորել տեսական գիտելիքը, իմանալ՝ ինչպես անել այս կամ այն բանը, այլ իրականում անել դա, սխալվել և սովորել սեփական սխալների վրա: Հակառակ դեպքում սաները ձանձրանում են, և դասը նրանց համար դառնում է անհետաքրքիր ու անարդյունավետ: Եվ սա բնական է: Իսկ մենք՝ ուսուցիչներս, պարտավոր ենք հաշվի առնել սովորողների կարծիքը, քայլել ժամանակին համընթաց, գերարագ փոփոխվող աշխարհում սովորել ու սովորել նորը, տեղեկատվության անսահման օվկիանոսում դառնալ սաներին ուղղորդողներ և, որ ամենակարևորն է, հետ չմնալ ամեն ինչ արագ յուրացնող սաներից ու նրանց հետ խոսել «ժամանակի լեզվով»:

Օգտագործված գրականության ցանկ

1. EduArmenia, վերապատրաստման դասընթացներ, 2022
2. https://kznakbnagavar.blogspot.com/p/blog-page_3.html
3. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf , էջ 39 /04.10.2022/
4. https://www.teachervision.com/lesson-planning/graphic-organizer?detoured=1
5. https://www.superteacherworksheets.com/graphic-organizers.html